Աբրահամյան Ռոզա[1]

ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակումն ու անհատականացումը իր զարգացմամբ կախված է պետության և հասարակության սոցիալ-քաղաքական ու տնտեսական վիճակից: Այս սկզբունքի բովանդակությունը, կատարվող փոփոխություններն ու ուղղվածությունը ձևավորվում են գլխավորապես սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոնների ազդեցությամբ:

Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման հարցերը կարգավորող իրավական նորմերի պատմական զարգացման, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության մեջ դրանց գործնական կիրառման ուսումնասիրությունը նպաստում է տվյալ երևույթի՝ որպես քրեակատարողական հիմնարկներում իրավակարգի ամրապնդման միջոցներից մեկի հետագա կատարելագործմանը, ինչպես նաև պատժի նպատակների իրացմանը:

Առաջին հերթին փորձենք բացահայտել «ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակում» և «ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացում» հասկացությունները:

«Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակումը» պատժի նպատակների իրացման ու քրեակատարողական օրենսդրության խնդիրների լուծմանն ուղղված և ազատազրկման դատապարտվածների դասակարգման առանձին խմբերի նկատմամբ կիրառվող ուղղիչ ներգործության ծավալի իրավական ամրագրումն է՝ հաշվի առնելով դատապարտյալների հասարակական վտանգավորության աստիճանը, վարքագծի և անձի առանձնահատկությունները[2]:

---

[1] ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Հ. Մ. Խաչիկյան:

[2] Տե՛ս **Шмаров И. В., Мелентьев М. П.,** Дифференциация исполнения наказания в исправительно-трудовых учереждениях Пермь, 1971, էջ 30:

«Ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացումը» քրեական և քրեակատարողական օրենսդրության դրույթների իրականացումն է, որոնք որոշում են դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի և ուղղիչ ներգործության միջոցների բովանդակությունը՝ հաշվի առնելով նրա անձը, պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագծի առանձնահատկությունները, ուղղիչ ներգործության միջոցների հանդեպ վերաբերմունքը, ինչպես նաև նման ներգործության ընկալման առանձնահատկությունները[3]:

Այժմ փորձենք քննարկել այդ սկզբունքների օրենսդրական ձևակերպումները, որոնք կապված են քրեակատարողական հիմնարկներում պատժի կատարման պայմանների կարգավորման հետ:

Այսպես, պատժի կատարման տարբերակումը և անհատականացումը, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 9–րդ հոդվածի համաձայն, դասվում է քրեակատարողական իրավունքի հիմնարար սկզբունքների շարքին[4]: Դրանք հատկապես վառ կերպով դրսևորվում են ազատազրկում պատժատեսակի կատարման ընթացքում[5]: Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ չկա միասնական մոտեցում «պատժի կատարման տարբերակում» և «պատժի կատարման անհատականացում» հասկացությունների սահմանման նկատմամբ: Գիտնականների մի մասն օգտագործում է «պատժի կատարման տարբերակում» հասկացությունը, մյուս մասը միավորում է պատժի կատարման «տարբերակում» և «անհատականացում» հասկացությունները, երրորդները թույլ են տալիս «տարբերակում» և «անհատականացում» հասկացությունների նույնականացումը:

Մեր կարծիքով քրեական և քրեակատարողական օրենսդրությունների կիրառման պրակտիկան թույլ է տալիս եզրակացնել, որ դատապարտյալների դասակարգումը պատժի կատարման տարբերակման հիմքն է, որի տրամաբանական շարունակությունը հանդիսանում է պատժի կատարման անհատականացումը:

Դատապարտյալների դասակարգումը յուրահատուկ գործընթաց է՝ կապված որոշակի հատկանիշների հիման վրա դատապարտյալներին միասեռ խմբերի բաժանելու հետ, որը հիմք է հանդիսանում

---

[3] Տե՛ս **Бриллиантов А. В.,** Дифференциация наказания и степень исправления осужденных к лишению свободы: Монография.-М.: ВНИИ МВД России 1997, էջ 9-10:

[4] Այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ:

[5] Տե՛ս **Наташев А. Е., Стручков Н. А.,** Основы теории исправительно-трудового права, Мичиганский университет. Юрид. лит-ра, 1967 էջ 56:

դատապարտյալների տարբեր խմբերի նկատմամբ տարբեր ծավալի ուղղիչ ներգործության կիրառման համար, այսինքն հանդիսանում է տարբերակման բաղկացուցիչ մասը, նրա փուլերից մեկը։

Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակումն իրականացվում է ոչ միայն դատապարտյալների՝ իրենց վտանգավորության աստիճանով տարբերվող դասակարգման խմբերի նկատմամբ, այլև այն խմբերի, ովքեր դասակարգվում են ըստ կիրառվող ուղղիչ ներգործության միջոցների ընկալման աստիճանի՝ կապված անձի որոշակի առանձնահատկությունների հետ (սեռ, տարիք, հոգեկան և ֆիզիկական հիվանդություն և այլն)։ Ընդ որում, պատժի կատարման տարբերակումը, որպես քրեակատարողական իրավունքի սկզբունք, իրականացվում է քրեակատարողական օրենսդրության նորմերի մեծ մասում, որոնք կարգավորում են ազատազրկում պատժատեսակը կատարելու և այն կրելու կարգն ու պայմանները (ՀՀ ՔԿՕ-ի 62-63–րդ, 69–րդ, 70–րդ, 99-111–րդ հոդվածները և այլն)։

Ազատազրկում պատժատեսակի կատարումը ենթադրում է ոչ միայն իրավասահմանափակումների համակարգ, որոնք կազմում են ազատազրկում պատժատեսակի բովանդակությունը (ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք, հասարակությունից հարկադիր մեկուսացում և այլն), այլև ներգործության տարբեր միջոցների կիրառում, որոնք չեն կրում հարկադիր բնույթ։ Դրանք բժշկական բնույթի միջոցներն են, ինչպես նաև ուղղման հիմնական միջոցները՝ դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը։ Նշված միջոցները, մեր կարծիքով, նպատակամղված են դատապարտյալի ուղղմանը, նրա կողմից նոր հանցագործության կատարման կանխմանը։ Դրանք կազմում են ուղղիչ գործընթացի բովանդակությունը, դրա հետ մեկտեղ՝ նաև ազատազրկում պատժատեսակի կատարման բովանդակությունը։ Ուստի ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքը[6] տարածվում է նաև ուղղիչ մի-

[6] Տե՛ս **Сперанский И. А.,** Содержание и реализация принципов исправительно-трудового права. Волгоград 1969, էջ 45-46։

ջոցների կիրառման գործընթացի վրա, որոնք չեն կազմում ազատազրկման բովանդակությունը[7]:

Կարծում ենք, որ տարբերակման հարցերի հետագա ուսումնասիրությունը հնարավոր չէ առանց պատժի կատարման անհատականացումը սահմանելու[8]:

Պատժի կատարման անհատականացման և տարբերակման էական տարբերություններից մեկը, մեր կարծիքով, այն է, որ տարբերակումն իրականացվում է գերազանցապես իրավական նորմերում, իսկ անհատականացումը՝ անհատապես դատապարտյալի նկատմամբ դրանց կիրառման գործընթացում:

Ուստի գտնում ենք, որ պատժի նպատակներին հասնելու, պատժի դերը մեծացնելու համար անհրաժեշտ է որոշակի միջոցների համակարգ, որը տարբեր ծավալի իրավասահմանափակումների կիրառման իրական հնարավորություն կարող է ապահովել դատապարտյալի նկատմամբ՝ կատարված հանցագործության ծանրության աստիճանից, այն կատարելու հանգամանքներից, կրկնահանցագործությունից և հանցավորի անձից: Այս կարևոր խնդրի լուծումը հնարավոր է պատժի կատարման տարբերակման, պատժի կատարման անհատականացման զանազան ձևերի օգտագործման և դատապարտյալների նկատմամբ ուղղիչ միջոցների անհատական կիրառման միջոցով:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը, ցանկանում ենք նշել, որ պատժի կատարման անհատականացումը պատմության ընթացքում հանգեցվել է պարզ ձևականության, այսինքն, կամ ուղղիչ հիմնարկների կառուցվածքի տարբերակումն ընդունվել է որպես պատժի անհատականացման շարունակություն, կամ էլ պատժի կատարման անհատականացումը դիտարկվել է որպես քրեակատարողական իրավունքի սկզբունքներից մեկը: Ուստի, թույլատրելի ենք համարում արձանագրել, որ պատժի կատարման անհատականացման բովանդակությունը սահմանելիս՝ ի տարբերություն պատժի կատարման տարբերակման, հաշվի է առնվում դատապարտյալների ոչ թե խմբա-

---

[7] Տե՛ս **Бриллиантов А.В.,** Проблемы классификации осужденных к лишению свободы в целях дуфференциации условий отбывания наказания.- М.: БНИИ МВД РФ 1995, էջ 29:

[8] Այնուամենայնիվ, գիտության մեջ պահպանվում են պատժի կատարման անհատականացման տարբեր ըմբռնումներ, ուստի ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացման ընդհանուր հարցերը մնում են ոչ բավարար մշակված:

յին, այլ անհատական առանձնահատկությունները։ Պատժի կատարման անհատականացման սկզբունքն իրականացվում է գերազանցապես ազատազրկման դատապարտվածների պահելու պայմանների փոփոխությամբ, սակայն, ինչպես և պատժի կատարման տարբերակման սկզբունքը, իր մարմնավորումն է ստանում ուղղիչ ներգործության միջոցների կիրառմամբ, որոնք համապատասխանում են դատապարտյալի անձին, նրա վարքագծին։

ՀՀ ՔԿՀ-ի 9-րդ հոդվածը սահմանում է, որ. «Պատիժը կատարելու տարբերակումն ու անհատականացումը հարկադրանքի միջոցների, դատապարտյալի ուղղման և նրա օրինապահ վարքագիծը խթանելու եղանակների նպատակահարմար կիրառումն է, որն իրականացվում է դատապարտյալի անձը տարբերակելու և անհատականացնելու միջոցով»։

Անդրադառնալով պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու սկզբունքի օրենսդրական ձևակերպմանը՝ ցանկանում ենք արձանագրել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 9-րդ հոդվածը բավական ընդհանրական է։ Հաշվի առնելով քրեակատարողական օրենսդրության հիմնարար սկզբունք լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ այդ սկզբունքի հիման վրա է որոշվում քրեակատարողական համակարգի կազմակերպման և գործունեության ռազմավարությունը՝ կարծում ենք, որ մեկ նախադասությունը բավարար չէ հստակ պատկերացում կազմելու նշված սկզբունքի վերաբերյալ և առավել նպատակահարմար կլինի դրանք ամրագրել առանձին հոդվածներով կամ հոդվածի առանձին կետերով, ինչը նաև որոշ չափով կնպաստեր գիտության մեջ այդ սկզբունքի վերաբերյալ միասնական մոտեցման ձևավորմանը։

Պատժի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքն իրականացվում է ոչ միայն քրեակատարողական օրենսդրության դրույթներում, այլև ժամանակակից պենիտենցիար (ուղղիչ հիմնարկների) քաղաքականության մեջ։ Այդ սկզբունքի հիման վրա է որոշվում ամբողջ քրեակատարողական համակարգի կազմակերպման և գործունեության ռազմավարությունը։ Ուստի, այդ սկզբունքի բովանդակությանը համապատասխան՝ առաջարկվում է պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքը քրեակատարողական օրենսդրության սկզբունքների համակարգում դասակարգել որպես ճյուղային սկզբունք։

Կարծում ենք, որ պատժի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքը նպատակահարմար է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում ամրագրել առանձին հոդվածով՝ սահմանելով այդ սկզբունքի հասկացությունը, բովանդակությունը, պատժի տարբերակման և անհատականացման, ուղղիչ ներգործության միջոցների կիրառման չափանիշները, սահմանելով դատապարտյալների նկատմամբ տարբերակում և անհատականացում իրականացնող սուբյեկտները:

Վերջինս քրեակատարողական համակարգի բարեփոխման արդի փուլում կարող է օգտակար լինել հաշվի առնելու և լուծելու պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքի իրականացման ընթացքում ծագող բազմաթիվ խնդիրներ:

Իսկ արված հետևությունները կարող են ելակետ և կողմնորոշիչ ծառայել քրեական պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքի իրականացման խնդիրների վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների, այդ սկզբունքը քրեակատարողական օրենսդրության մեջ ամրագրելու համար, որոնք ուղղված են պատիժների կատարման տարբերակման և անհատականացման ճյուղային (նեղմասնագիտական) սկզբունքի իրականացման կատարելագործմանը:

Роза Абраамян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ДИФФЕРЕНЦИАЦИИ И ИНДИВИДУАЛИЗАЦИИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ В ВИДЕ ЛИШЕНИЯ СВОБОДЫ

Научная статья посвящена исследованиям вопросов уголовного права, связанных с исполнительной дифференциацией и индивидуализацией исполнения наказания в виде лишения свободы. Основная цель заключается в разработке и дальнейшем развитии теоретических положений относительно дифференциации и индивидуализации исполнения наказания в виде лишения свободы, развития предложений по изменению законодательства, разработки рекомендаций по совершенствованию организационной деятельности сотрудников пенитенциарных учреждений в достижении целей уголовного наказания, а также определения уголовной политики в этой области.

Roza Abrahamyan
PhD student of the YSU Chair of Criminal Law

LEGAL GUARANTEES OF DIFFERENTIATION AND INDIVIDUALIZATION OF IMPRISONMENT IMPLEMENTATION

The article discusses the scientific issues of differentiation and individualization of imprisonment implementation from the standpoints of criminal law. The main aims of the research are: to elaborate and further develop theoretical approaches in regard to the differentiation and individualization of the imprisonment implementation; to elaborate proposals aimed to the amendment of the legislation; to develop recommendations for the improvement of the organizational performance of prison staff in order to achieve the proposes of criminal punishment; to determine penitentiary policy in this area.

Բանալի բառեր՝ *պատժատեսակ, ուղղման միջոց, քրեակատարողական հիմնարկ, պատժի նպատակ, ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակում, ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացում, պատժի նպատակ, դատապարտյալների դասակարգում, ուղղման միջոց, պենիտենցիար քաղաքականություն:*

Ключевые слова: *наказание, средство исправления, колония, цель наказания, дифференциация и индивидуализация исполнения наказания в виде лишения свободы, классификация заключенных, пенитенциарьная политика.*

Key words: *punishment, means of correction, colony, purpose of punishment, the differentiation and individualization of the imprisonment implementation, classification of prisoners, penitentiary policy.*